

Մրցույթի հիմնական պայմանները

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով (այսուհետ «Առաջարկ») սահմանվում են մրցույթի (այսուհետ՝ «Մրցույթ») պայմաններն ու կանոնները: Մասնակցելով Մրցույթին՝ Դուք հավաստում եք, որ լիովին և անվերապահ ընդունում եք Առաջարկի հետևյալ պայմանները: Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային միջոցառում:

2. Կազմակերպիչ

2.1. Մրցույթն իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, conversebank.am):

2.2. Մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Մրցույթի ժամկետ

3.1. Մրցույթի հայտարարությունը տեղադրված է Բանկի կայքում (<https://conversebank.am/hy/blog>) և սոցիալական հարթակներում:

3.2. Մրցույթը կայանալու է 2023 թվականի սեպտեմբերի 01-ից՝ ժամը 00:01-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը՝ ժամը 23:59: Մրցույթի պայմանները նկարագրված են Առաջարկի 5-րդ բաժնում:

3.3. Մրցույթի արդյունքների ամփոփումն իրականացվելու է Բանկի ֆեյսբուքյան էջի (www.facebook.com/conversebank) ուղիղ հեռարձակման միջոցով՝ 2023թ-ի նոյեմբերի 24-ին:

3.4. Սույն Առաջարկում նշված ցանկացած ժամանակ պետք է համարվի Երևանի ժամանակը:

4. Մրցույթի մասնակիցներ

4.1. Ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ 18 տարին լրացած հաճախորդներ (այսուհետ՝ Հաճախորդ), ովքեր Մրցույթի ընթացքում կկատարեն հանրագումարային առնվազն 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի ընդհանուր գումարի անկանխիկ գործարքներ իրենց Կոնվերս Վիզա Պրեմիում (Converse Visa Premium) (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերով:

4.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Բանկի աշխատակիցները:

5. Մրցույթին մասնակցելու կանոններ

5.1. Մրցույթի մասնակից դառնալու համար հարկավոր է Կոնվերս Բանկի Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերով կատարել հանրագումարային 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի ընդհանուր գումարի անկանխիկ գործարքներ:

5.2. Կատարած յուրաքանչյուր հանրագումարային 500,000 ՀՀ դրամի դիմաց Հաճախորդը ստանում է մեկ անհատական կոդ: Յուրաքանչյուր հաջորդ 500,000 ՀՀ դրամի դիմաց համապատասխանաբար ևս ստանում է նոր կոդ:

5.3 Առաջարկի 5.1 կետում նշված կանոնները կատարելու դեպքում Հաճախորդը Էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին ստանում է անհատական կոդ, որով կարող է մասնակցել Մրցույթին:

5.4. Եթե Հաճախորդը իրականացնում է Կոնվերս Բանկի Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերով 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի ընդհանուր գումարի անկանխիկ գործարքներ, ապա Հաճախորդը համարվում է Մրցույթի մասնակից:

5.5. Բանկը հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

5.6. Սահմանել, որ քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները /ներառյալ հեռահաղորդակցման, ինտերնետ ծառայությունների վճարները/, հաշիվների, քարտերի, Էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուգանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

5.7. Մրցույթի պայմանները տարածվում են Visa միջազգային վճարային համակարգի հավելյալ և կից քարտերի վրա, և վերոնշյալ քարտերով գործարքները հաշվարկին մասնակցում են:

5.8. Բանկը պատասխանատվություն չի կրում POS տերմինալների խափանման, այդ թվում՝ կապի, անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված կամ E-POS տերմինալներով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված անկանխիկ գործարքների համար:

5.9. Բանկն իրավունք ունի հրաժարվել մրցանակներ տրամադրելուց, եթե Մրցույթի մասնակցի կողմից կատարվել է Մրցույթի պայմանների խախտում և/կամ զեղծարարարություն և/կամ չարաշահում:

5.10. Ուղիղ եթերի խաղարկության հաղթողները, մասնակցելով Մրցույթին, տալիս են իրենց համաձայնությունն իրենց անունները Բանկի պաշտոնական կայքում և/կամ սոց. կայքերի պաշտոնական էջերին տեղադրելու հարցում:

5.11. Մրցանակները վավեր են Մրցույթի ամփոփումից սկսած մինչև 2024թ. մայիսի 31-ը ներառյալ:

6. Հաղթողների սահմանում

6.1. Հաղթողների ընդհանուր թիվը՝ 36 անձ:

6.2. Մրցանակների ցանկն է.

№	Մրցանակների ցանկ
1.	Ուղևորություն Abu Dhabi Ferrari world Theme park նախատեսված մինչև 4 անձի (ամուսիններ և 2 երեխա) համար
2.	Չվարթնոց օդանավակայանի VIP սրահի մուտքի 5 երկկողմանի տոմս՝ յուրաքանչյուրը նախատեսված 2 անձի համար (Էլեկտրոնային կտրոնի տեսքով)
3.	30 կտրոն օդանավակայանի Fast Track(սահմանային անցակետում արտահերթ սպասարկում) ծառայությունից օգտվելու համար (Էլեկտրոնային կտրոնի տեսքով)

6.3. Մրցույթում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Հաճախորդներին տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով:

6.4. Մրցույթի արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով 2023թ. նոյեմբերի 24-ին: Մրցույթի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մանրամասների վերաբերյալ Մրցույթի մասնակիցները կծանուցվեն իրենց Էլեկտրոնային հասցեով կամ կարճ հաղորդագրության (SMS-ի) միջոցով:

6.5. Մրցույթի մրցանակները ստանալու կարգի մասին Բանկը կտեղեկացնի Հաճախորդին՝ վերջինիս Էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելով և/կամ հեռախոսազանգի և/կամ SMS միջոցով:

6.6. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կիրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2023թ. նոյեմբերի 27-ը՝ ժամը 23:59:

6.7. Հաղթող մասնակցի՝ ամփոփիչ միջոցառմանը ներկա գտնվելու անհնարինության դեպքում ամփոփիչ միջոցառմանը կարող է մասնակցել լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

6.8. Լիազորագիրը հնարավոր է տրամադրել նաև Բանկում, թվային ճանապարհով՝ ՅՈՒՆԻԿՈՒՆԵՏ Բանկ համակարգի միջոցով կամ Converse Mobile հավելվածի չաթ բաժնում:

6.9. Հաղթող մասնակիցը իրավունք ունի առաջարկի սույն հիմնական պայմանների 6.2 կետի առաջին կետով սահմանված մրցանակը, այսուհետ՝ Գլխավոր մրցանակ, փոխանցել/սվիրել իր ընկերոջը, այն պայմանով, որ ընկերը կունենա Converse Mobile հավելված և կլինի ակտիվ հաճախորդ (ակտիվ հաճախորդ է համարվում այն հաճախորդը, ով վերջին մեկ ամսում կատարել է առնվազն մեկ գործարք): Այս ձևակերպումը կկատարվի Converse Mobile հավելվածի չառ օգնականի միջոցով, որտեղ Հաճախորդը պետք է տրամադրի ընկերոջ տվյալները նույնականացման համար: Մրցանակի փոխանցման առավելագույն ժամկետն է

2023թ. դեկտեմբերի 15-ը, 18:00: Այլապես որոշման հիմքով Մրցանակի տրամադրումը կհամարվի ուժը կորցրած:

6.9. Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2023թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ, կապի հաստատման անհնարինության դեպքում (հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ դեպքերում) Մրցույթի արդյունքները տվյալ Հաճախորդի համար համարվում են ուժը կորցրած:

6.10. Մրցույթի, մրցանակների տրամադրման մանրամասները ճշտելու համար Բանկը կապ է հաստատում Հաղթողների հետ հեռախոսով/Էլեկտրոնային փոստով: Բանկը կստանա կամ կպահանջի միայն այնպիսի անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ են համարում մրցանակը տրամադրելու և շուկայավարման նպատակներով օգտագործելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության: Հաճախորդների անձնական տվյալների վրա տարածվում է Բանկի գաղտնիության քաղաքականությունը: Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցը համաձայնում է Մրցույթի և [Բանկի գաղտնիության քաղաքականության](#) բոլոր պայմաններին:

6.11. Ցանկացած լրացուցիչ գործողությունների և մրցանակի հետ կապված այլ ծախսերը կատարվում են հաղթողի կողմից: Մրցանակները տրվում են «այնպես, ինչպես կա»:

6.12 Բանկը պատասխանատվություն չի կրում Մրցանակների մասով տվյալ ծառայությունը սպասարկող անձի պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում՝ պատճառված վնասների համար:

6.13 Բանկի հաղորդակցման տվյալները

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Email՝ info@conversebank.am
- WhatsApp՝ +374 95 511211
- Skype՝ conversebank-callcenter

Բանկը վերահսկվում է Կենտրոնական Բանկի կողմից: